

ՄԷՋԱՄՈՒԱԷ ԱԽՊԱՐ

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA - I - AHBAR
Grand'Rue de Pera, Tauxim 65

Հաճախստ ի՞նչ սեճա հաճի ՁԱՐՇԵՆՊԻՀ ՎԵ
ՀՈՒՄԱ ԻՐԹԻՍԻ կ/սկիւրի մեշր օրումուր :

ՆԻԽԱՒԷՍԻ
30 ԲԱՐԱ

مجموعة اخبار
لكاوغلى تقسيم جادى نومرو 70

ԱՊՐԵՆԻ ՖԵՅԱԼԱՐԸ . = Իսթանպուլ իշին սենյակի 60 ղշ . = 6 ալլըղը 35 . = Թաշրա իշին սենյակի 85 . = 6 Ալլըղը 45 ղշ . արբ . = Մէմարիքի Էնէպիւր իշին սենյակի 20 ֆր . արբ . = Բաթա իւճրէթի պիզէ ալիա տիւր . = 15 կիւնիւր իշին սենյակի 60 բար . արբ . = ԻԼԱՆԱԹ ՇԱՐԻԹԻԱՐԸ . = 1ինճի սահիֆէի սրբասը 5 , 2ինճի վէ Յիւնճիւ սահիֆէի սրբասը 3 , վէ 4ինճիւ սահիֆէի սրբասը 1 ղշ . արբ . = 2օգ տէֆա տէրճ իսիւնէճէ իլանաթ իշին այրըճա բազարը օրումուր :

Ղաղէթայա միւթէալիւր խուսուսաթ իշին ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՕՂԱԾԵԱՆ միւրաճաւթ . ուն . = Իտարէխանէ՛ Պէյոզլուստ ճաւտէի քէպիւրտէ Ն . 65 :

ՍԱՍՍՈՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆԿՈՒՍԱՆԲ ԵՒ ԻՐԵՆՑ ՎԱՅԺԱՐԱՆԻՆ ՇՈՒՐՁԸ

(Շարունակութիւն և վերջ)

Եւ ահա լայնի մ'օր վերջ կրկին նորն յարկին հայերէնի հարցաքննութեան քնն. նիշ մասնախմբին հրաւիրագրերն ցրուեցան : Ըստ ժամանակացոյցին որոշեալ ժամերուն ներկայ գտնուեցայ : Հարցաքննութիւնը Բրիտանական իշխանի սկսուա : Նախաբանը կազմող զաղդիւրէնէն յոյժ գնահատելի կողմեր ունէր , թէ իւր լեզուաբանական տեսակէտով և թէ ուսուցանելի գիտութեանց նախադրանքներուն աւելնական սկզբունքներուն մասին , զորանք Բոյր Երանուհին ամենայն անձնութեան իւր աշակերտունեաց աւանդած էր ճարպիկ դասախօսութեամբն , ինչպէս նաեւ շօշափելի օրինակներովն անշուքունելի կանոնները անոց պարզելով :

Քերականութեան ժամուն էր , երբ Յարգող քննիչներէն մին շարադրութեան համար առաջին կարգիներն անկիւն մը առանձնացնելով , պարզապէս յարմար նիւթն ընտրեց : Ժամանակ մ'եղաւ իւրաքանչիւրին հաւաքուելով , անոց մէջ կը նշմարուէր լակոնական , բայց վսեմ ոճով վեճ զգացումներ պարզուած : Այդ զգացմանց ու նկարագրի աղետութիւնը , վսեմութիւնը ու պերճութիւնը անոց աւանդող , զանոց զարդարողն բաց ի Բոյր Երանուհիէն ո'վ կրնայ ըլլալ : Ինչպէս այս , նոյնպէս զարդոցն չըլլան մէջ գտնուած մէն մի դաս իւր կարգին ու սեւին մէջ ընդհանրէն և ամենէն իւրի մտքը յոյժ գնահատելի կողմէն ունին : Ու է հարցում և ոչ մէկ օրիորդէն անպատասխան մնացած է : Մանաւանդ առաջիններուն մեծ մասը , որոնց մէջ մեր համագայիններէն Օր . Տիրուհի Փայայեան մատնաշելու արժանի պատասխաններ տուած է : Ինչպէս ասորը նոյնպէս միւս աշակերտաց պատասխանները «պրապո»ներէն ընդմիջուելով բարձրագոյն թուերով կը հասուցուէր : Այս ալ աշակերտունեաց ցնծում ու ուրախութիւնն ըլլալէ զատ զարդոցն յառաջդիմութեան մակարդակին բարձրացման պղտիկ սպասցոյց մը չէ : Անուարանալի ճշմարտութիւնն մ'է որ արդէն ըսուած թէ՛ «Ժամացոյցին արժանիքը իւր արագութեամբ չէ , այլ կանոնաւոր ընթացքով կը գնահատուի» : Իրօք այս յիշանակն ալ չնորհիւ իւր հեռաւոր Տեսչուհի Պոյր Ազիսի ըրած կարգադրութեան կանոնաւոր ընթացքին , զգալի քայլ մը առնելով , օր քան զօր գնահատելի արգիւններ արտադրած է :

Եթէ երբեք տարիէ մը ի վեր աշակերտուհիներէ աւելի , ժողովուրդէն սպասուած մրցանակ ու վկայականի բաշխման չգնաղ հանգիստն փառաբերութեան ու շնորհիւ մասին , առանց յիշատակութեան անցնիմ , որքան օրիորդաց՝ աւելի եւս զարդոցն վարկին յանդգնած պիտի ըլլամ : Այսպիսի առթիւ զայն մատնանշելու առթիւ խուսաբել մեծ անխնայութեան մ'է :

Յուլիս 10 , կիրակի , ժամը 6 1/2 (ը . թ .) էր երբ հանդիսակցներն սկսած էին երամ երամ խոնուր դարձոցն պարտէզն , ուր արդէն ամէն ինչ հանդէսին մասնաւոր շնորհ փառաբերութեամբ յարգարուած էր :

Ներկայներուն մէջ կը նշմարուէր , ի դիմաց Միւթէալիւրի պէյի վսեմ . յառաջդիմութեան Բէթուլ Սիւրիթ պէյ , համազգայնոց Առաջնորդ Արս . Յակոբ Աշոտ Եպ . , Յարէնեքու դարձոցն տնօրէն և դերտնօրէն , Թաղապետական վարչութեան նախագահ Շիւքրէ Էֆ . , Աւստրիական և Ռուսական հիւպատոսներ , Օսմ . պանագայի Բէ . Ժիւր դերտնօրէնները , դեռ ուրիշ Հայ , Յուն և Եւրոպացի երեւելի անձնաւորութիւնք , որք կը հիւրասիրուէին սեւեռոյս հասարակութեան անձնուէր երկասարդներէն :

Իբր պղտիկ exposition , աշակերտունեաց ձեռագործք , դասաւորման համադրանք Բոյր Բրիտանիէն (*) կանոնաւորապէս կահաւորած էր թատերական ղուրս իրենց մասնաւոր տեղը : Թէև արուեստական , սակայն այս ձեռագործքն անսարան ալ իւր մէջ սքանչելոցնիչ հանգամանք մը ունէր : Ասոց մէջ նաեւ զետեղուած էր աշակերտունեաց բարի վարքի ու ջանասիրութեան «Թաղալոն» :

Ճիշդ որոշեալ ժամուն հանգիստն բացուեցաւ , Համալիւրի քայլերգով , զոր հանդիսականքը յոռնկայա ունիւղներէն Նախ Օր . Արմենուհի Թիւրպան (ինքն արդէն թրքախօս ընտանիքի զաւակ) լեզուին մասնաւոր առաջնութեամբ արտասանեց , Օգոստափառ կայսեր դրուատեաց և արեւադարձեան ճառը , որուն մէջ վսեմ . Միւթէալիւրի պէյին ալ բաժին տրուած էր :

Հանդիսին զլուաւոր մասն կը կազմէին հայերէն կատակերգութիւն մը , «Համալիւրի» և «Կարգութիւն» , որու մէջ Օր . Գիւնուլարէ կիրեղեան իւր հիւսալի շարժութեանովն ամենուն ուշադրութիւնը կը գրաւէր :

Երկրորդ գաղղիներէն արամաեօտութիւն մը «Jeanne l'opheline» և ճոխ յայտագրին համաձայն կը յաջորդէին համեստ մենաստեղութիւնք , զայնակ , հայերէն ու գաղղիներէն երգեր , որոնք կ'ընդմիջուէին ծափերէ : Երեք ընթացաւարտուհիներու վերակայանի բաշխումէն վերջ , իւրաքանչիւրը իւր հրաժեշտի ողջոյնը տուաւ . նախ Օր . Գիւնուլարէ կիրեղեան գաղղ . , յետոյ Օր . Տիրուհի Փայայեան հայ . , որու մէջ ոչ թէ արուեստ այլ բուն իր օրտի երախտագէտ զգացումները կը նշմարուէր : Հոսով յետոյ Օր . Վիգթօրիա Մաթոսեան հայ . : Ասոց ամենուն իբր պատասխան յաջորդեց Օր . Արմենուհի Թիւրպանի դարձոցն Տեսչութեան ու աշակերտունեաց կողմանէ ողջերթին : Փոքրիկ աշակերտներու վազանց խնդրանքի տոնաւորութիւն սոյն չնայող հանդիսին վերջ արուեստաւ : Հանդիսականք խոտ ուրախ , բիւր շնորհակալութիւններ վերջ , մեծ գոհութեամբ մեկնեցան :

Սամսոն

(*) Տրապիզոնի նախկին կուսակալ Գաւրի պէյ , Բոյր Բրիտանիէի ձեռագործի ու անդիւրբութեան արժանիքն գնահատելով , իբր մասնագէտ վկայականաց մէտալ մ'ալ ընծայած է անոր :

ԿԻՐԻՆ

Միջերկրականի ժայռաւոր ակունքն . ինչն սահելու ժամանակ , դեռ կ'ուզէի դիտել ութը տարի սնած , քաղցր յիշատակներով լի վայրը , մինչ ան կը թռչէր , կը հեռանար : Կատարեալ յուզման վիճակի մէջ՝ Ասորեաց աւազուտ ակունք մը կ'ելլելով կրկին և ծննդավայրին անձկացող հոգին կ'շառայէ ինձմէ առաջ երթալ . կը զարմանամ տեսնելով փոխուած երկրի , փոխուած անձինքը , փոխուած ամենէն աւելի ուսումնարանը , վերջինս շատ յառաջ գացած էր , շնորհիւ Գիւր . Գրիգոր Վ . Պարեանի , անդուրն Առաջնորդին , և պատ . Խնամակալներուն , ջանքը ուսուցչաց : Արդէն քննութիւնը սկսած ըլլալով , զաղդիւրէնի և ուրիշ մի քանի ճիւղերու մէջ աշակերտաց ուշիմութիւնը ցուցուած էր : Յուլիս 10 (23 Կիրակի օրը կը մնար միւսներուն հանդիսական ընկերութիւնը ներկայացնել կիրեղոյ համայնքին :

Ասոր համար հրաւիրուած էին անդուրն Վսեմ . Ֆէվզի պէյ անդակալը , փոխան անդակալին Հայազգի Վսեմ . Բասագալ Էֆ . Անտրեան , նաեւ անդուրն Պէ . Էտիէն Էնիթի Մէնմէլէ պէյը և ուրիշ նշանաւոր անձինք : Հայ համայնքը ամբողջ իւր բաժանումներով կը ներկայացուէր , մանաւանդ ուսումնական մարմինը փութացած էր հրաւիրին ներկայանալ . ինչպէս նաեւ Բողոքականաց պատուելին , Հանդէսը տեղի կ'ունենար տեղոյս Կաթող . Հայոց Առաջնորդարանին ընդարձակ և օղակէտ պարտէզին մէջ , ուր ամէն կողմէ խուռն բազմութիւն դիմած էր :

Հանդէսը սկսաւ Համալիւրի քայլերգով : Երգերէն ընկերակցութեամբ , որմէ վերջ թրքերէնի և հայերէնի երկու ժամու խիստ քննութիւն մը ցուց զարդոցն յառաջդիմութիւնը : Ամէն տեսակ հարցումներ եւ զան հանդիսականաց կողմանէ : Տեղակալը հայերէնի հմուտ՝ չպակցեցաւ իւր կողմանէ մերթ հայերէն և մերթ թուրքերէն քննութեան մասնակցի : Վերջապէս քննութիւնը լնացաւ մեծ գոհունակութեամբ , և մի երգով ուրիշ տեսարան բացուեցաւ : Երաժշտական զարկերն ամենայն ճշդութեամբ չնշառուելով՝ մարդուն հոգին ու միտքն վեր կը տանէին : Ուշ կը գրաւէին : Ասոր յաջորդեց ձօն մը թուրքերէն , որուն մէջ կը յայտնէին աշակերտք իրենց շնորհակալութիւնը առ Վեհափառ Կայսրն : Յետոյ դանակաւոր երգ մը ասոր փոխանակեց , ուրիշ ձօն մ'ալ , ուրիշ երգ մ'ալ , ու կրկին բանաստեղծութիւն մը հայերէն , զոր կարգաց Թուրք հայագէտ պատանի մը , որուն յաւարտն գոչեց :

«Ապրիլ յուլէս Օսմանեան , փառապանծ զահոյն Սուլթան , Արքայ Ապա իւ Համիա Խան , ապրիլ հազար ապրիլ , իւր յաղթական բանակներովն . ապրիլ նաեւ մեր Վսեմ . Տեղակալ Ֆէվզի պէյ , որ կիրեղի կրթական և բարոյական յառաջդիմութեան համար ոգի ի բռնի կ'աշխատի , անձամբ քաջալերելով զանոնք , որ երկիրն զարգացման ստատոսին »

Մաքսաբարձեան ձայներ մինչեւ երկինք բարձրացան , օդակներ քառուեցան , սիկանդեր ծխուեցան , օդը նոր երգով մը թնդաց : Խօսակցութիւն մ'ալ տեղի ունեցաւ , որուն մէջ զարդոց տղու տեղեան դէմ կը մաքաւէր . մանկուքը վարժարան երթալ և հայերը իրենց նըպաստը այս մասին չգլանալ կը յորդորէր : Ի վերջոյ Վսեմ . Ֆէվզի պէյ դրուատեց մեր սիրելի Օգոստափառ Կայսեր և իր փառապանծ Տէրութեան նկատմամբ ժողովրդեան ցոցուած հնազանդութիւնը , սէրն ու համակրանքը , զովեց և ուրախութիւն յայտնեց ուսումնական յառաջդիմութեան մասին : Նորա պատասխանեց անդուրն Իւր . Ժողովրդապետը՝ բացատրելով իւր գոհութեան և նախկին հանգիստը հանդիսականաց և ուսուցչաց . աղոց ալ յորդոր ըրաւ նորն ընթացքով շարունակել , Հանդէսը լմնացաւ , և զլիսաւորք Առաջնորդարան սեղանի հրաւիրուեցան :

Իմ կողմանէ , այս տղայոց քննութիւնն ներկայանալով , յառաջացումին դիտելէ վերջ , ցաւօք սրտի ինքրեկան կը հարցունէի . ինչո՞ւ համար միայն տղայոց պիտի սեփականուէր կրթութիւնը , ուսումը , և օրիորդք՝ անկէ զուրկ պիտի մնան : Ընտանիք պիտի կազմեն վերջը այս երկուքը , և նոր սերունդը պատրաստուել կողուած են . այդ նոր սերունդին սրտի և մաքի չցանուած անդապտանը՝ մօր յանձնուած է նախախնամութեանն մշակել . նախական սերմը ցանել , ապագան կ'ուզեն ըլնել , այդ սերունդին՝ մօր արուած է որդի , և երբ մայրն ինքնին չուենար ընտիր սերմեր , երբ նորա օրտն ու միտքն ալ ուժ տուէ՛ որոշ մասամբ մը գոնէ՛ նաեւ բարի տրամադրութեան զուրկ կը լինի , հետեւանքն գուցեկ ոչ ոք կրնայ դժուարիլ : Արդէն սոյն պատճառաւ էր որ , առջի խընամակալները Անարատ Յղութեան բազմարդիւն կուտանաց յանձնած էին ուրիշ մի զարդոց ուր շատ մեծ յառաջացման յոյս կար : մինչ . . .

Հաստատուն յուսով կ'ապրինք այսօրուան դարձոցներու յառաջացումին մասին : նաւոր կերպով հոգ տանող Գերբըշեանի Կ-Պատրիարքի մը տակ , որմէ հասարակութիւնն ուրիշ բան չխնդրեր , բայց եթէ գոցուած զարդոց բանալ , Որքի մը խնդիրը միշտ լսուած է . նոյն իսկ աւանդն անդգայները անոր համակրանք մը կ'զգան . լսուի՛ ուրեմն ինչ որ ոչ թէ աւանանական մը միայն , այլ ամենը միտքն ան կը խնդրեն :

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԻՐՈՒՄԻԶ

Կիրեղն , 16)29 Յուլիս 1905

ՊԻՐ ԽԱԹԸՆԷ

Միւլիւրի Էֆէնտի ,

Էօմիւլիւրէ հիւրմէթ՝ հէր վաղը՛ մուգատես պիր վաղիքի օլտուղընը ղաղէն ինքնզգաւ չօգ տէֆա եւաղմազ տաւորդ : Անպա Էօմիւլիւր պիրիւր պիր Բուհանի Բէթէր հազգընտա պու վաղիքի տաւա

(Rt₂Pt₂ L₂)

Թէվհիտ իտիւմիշ Էսէ. ումոււմի 98 30
Րուսէլի շըմէնաշֆէրի ֆր. 180 05